2711 բ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՕՐԷՆՔՆԵՐԻ ՀԱՒԱՔԱԾՈՒ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՊԱՐԼԱՄԵՆՏԻ

1919 ՆՈՅԵՄԲԵՐԻ 14 ԵՐԵՒԱՆ № 3

14252

ՑԱՆԿ.

24. Սենատին եւ Դատաստանական Պալատին վերաբերող օրէնքի լրացման մասին.
25. Երեւան քաղաքում բնակարանների դրաւման մասին.
26. Բնակարանների դրաւման օրէնքի փոխոնման եւ լրացման մասին.
27. Բնակարաններ դրաւող կոմիտէի համար 55.000 ր. վարկ բանալու մասին.
28. Զինաժողովի օրէնքի ժամանակամիջոցը երկարացնելու մասին.
29. Ալէքսանդրապոլի Առեւտրական դպրոցի ծառայողներին նպաստ տալու համար 57.956 ր. 30 կ. վարկ բանալու մասին.
30. Ալէքսանդրապոլի Հրանոթային արհեստանոցների կահաւորման համար 2.172.000 ր. վարկ բանալու մասին.
31. Միջնակարգ դպրոցների ազգայնացման պատճառով հեռացուած պաշտօնեաների համար առհաշիւ 150.000 ր. վարկ բանալու մասին.
32. Պարլամենտի դրագարան հիմնելու համար 30.000 ր. վարկ բանալու մասին.
33. Պարլամենտի նախագահութեանը անակնկալ ծախսերի համար 20.000 ր. միանուագ վարկ բանալու մասին.
34. Հայաստանի Կօոպերատիւների միութեանը 5 000.000 ր. պարտք տալու մասին.

ՕՐԷՆՔ

24. Սենատին եւ Դատաստանական Պալատին վերաբերող օրէնքի լրացման մասին.

Հաստատուած է 1919 թ. Սեպտեմբերի 26-ին.

Քրէական Դատավարութեան կանոնագրութեան 1267-րդ յօդուածը վերացնել։

Փոխ նախագահ Պարլամենտի՝ Ս. Տիգրանեան
Աւագ քարտուղար՝ Յ. Տէր Յակոբեան

1919 թ. Սեպտեմբերի 29
Երեւան։

14252

ՕՐԷՆՔ

25. Երևան քաղաքի բնակարանների գրաւման մասին.

Հաստատուած է 1919 թ. Հոկտեմբերի 3-ին

Ի փոփոխումն Նախարարական Խորհրդի 1919 թ. յուլիսի 3-ին ընդունած օրէնքի՝ «Պաշտօնական անձանց և պետական հիմնարկութիւնների համար Հայաստանի Հանրապետութեան քաղաքներում բնակարաններ և կացարաններ բռնագրաւելու կանոնների և բռնագրաւային յանձնաժողովներ կազմելու մասին»՝ Հայաստանի Պարլամենտը՝ սոյն օրէնքի հրատարակութեան օրից սկսած մինչև 1920 թ. սահմանում է հետևեալ կանոնները՝—

Յօդ. 1. Երևան քաղաքում բնակարանների և կացարանների գրաւման գործը վարում է բնակարաններ գրաւող յատուկ կոմիտէն, բաղկացած նախագահից և երկու անդամներից։ Կոմիտէն ղեկավարելու է ներկայ կանոններով. նրա գործունէութեան օրինականութեան վրայ հսկում է Ներքին Գործոց Նախարարը։

Ծանօթ. Նախագահին նշանակում է Ներքին Գործոց Նախարարը, անդամներից մէկին՝ Զօրական Նախարարը, իսկ միւսին— Երևանի Քաղաքային խորհուրդը։

Յօդ. 2. Բնակարանների և կացարանների գրաւումը կատարւում է Պարլամենտի անդամների, պետական և հասարակական հիմնարկութիւնների, պետական պաշտօնեաների և այլ պետութեանց ներկայացուցիչների համար։

Յօդ. 3. Այլ պետութեանց ներկայացուցիչների, Պարլամենտի անդամների և պետական հիմնարկութիւնների համար ամբողջ շէնքեր և բնակարաններ կամ կացարաններ գրաւելու դէպքում կոմիտէն յատկացնում է տնատէրերին և բնակարանատէրերին բնակարաններ կամ կացարաններ համաձայն սոյն կանոնների։

Յօդ. 4. Գրաւման ենթարկուած բնակարանների և կացարանների կահ-կարասիքը գրաւման ենթակայ չէ, բացի այն դէպքերից, երբ այդ կահ-կարասիքը հարկաւոր է այլ պետութեանց ներկայացուցիչների կարիքների համար։

Յօդ. 5. Գրաւման կոմիտէն ցուցակագրում է գրաւելիք բնակարաններն ու առանձին սենեակները, հաշիւ է առնում և ըստ հարկի բաշխումը կատարում

Յօդ. 6. Տնատէրերն ու բնակարանատէրերը պարտաւոր են կոմիտէին կամ նրա ներկայացուցիչներին ճշգրիտ հաղորդել պահանջուած բոլոր տեղեկութիւնները։

Յօդ. 7. Գրաւման ենթարկուած բնակարանների կամ սենեակների վարձի քանակը որոշում է կոմիտէն համաձայն «Սահմանային գների» օրէնքի 3—8 յօդ։ Կոմիտէի այս որոշումների դէմ կարելի է բողոքել հաշտարար դատաւորին։

Յօդ. 8. Երկու շաբաթից աւելի արձակուրդով կամ պաշտօնական գործով քաղաքից հեռացող պաշտօնական անձանց բնակարանները պահւում են նրանց համար, եթէ նրանք այդ մասին նախապէս յայտնել են կոմիտէին, ներկայացնելով արձակուրդի կամ պաշտօնական ուղևորութեան վկայականի պատճէնը։

Յօդ. 9. Քաղաքացիները պարտաւոր են անյապաղ կատարել կոմիտէի կարգադրութիւնները բնակարանների գրաւման մասին։

Յօդ. 10. Միլիցիան և համապատասխան վարչութիւնը պարտաւոր են անյապաղ իրագործել կոմիտէի կարգադրութիւնները բոլոր քաղաքացիների նկատմամբ անխտիր։

Յօդ. 11. Կոմիտէն ունի իր գրասենեակը՝ ծառայողների կազմով։

Յօդ. 12. Կոմիտէն իրաւունք ունի սոյն օրէնքի դէմ մեղանչողներին վարչական եղանակով բանտարկելու մինչև 3 ամիս կամ տուգանելու մինչև 10.000 ռուբլի։

Յօդ. 13. Բնակարանները բաշխելիս կոմիտէն առաջնորդւում է հետևեալ կանոններով. ա) մինչև 5 տարեկան երեխաները հաշիւ չեն առնւում. 5—12 տարեկանները—երկուսը հաշւում են մի հոգի. բ) Մենակ ապրող իւրաքանչիւր անձին յատկացւում է մէկ սենեակ. գ) Երկու սենեակի իրաւունք ունեն 2—3 հոգուց բաղկացած ընտանիքները. դ) 3 սենեակի՝ 4—5 հոգուց բաղկացած ընտանիքները. ե) 4 սենեակի՝ 6—7 հոգուց բաղկացած ընտանիքները, զ) 5 սենեակի՝ 7 անդամից աւելի ունեցող ընտանիքները։

Ծանօթ. Ընտանիքի անդամ է համարւում նաև ընտանիքում ապրող ոպասաւորը։

Յօդ. 14. Բժիշկները և տատմաբոյժները յօդ. 13-ում յիշատակուած քանակից դուռ իրաւունք ունեն ունենալու նաև մի առանձնասենեակ։

Յօդ. 15. Պետական և հասարակական հիմնարկութիւնների բնակարաններն ու կացարաններն ենթարկւում են կոմիտէի վերատուգման. աւելորդ սենեակները ենթակայ են գրաւման։

Յօդ. 16. Կոմիտէի սոյն օրէնքը խախտող գործողութիւնների դէմ եղած բողոքներն ենթակայ են Երևանի շրջանային Դատարանի

վարչական բաժնին, որը իր վճիռը կայացնելու է 3 օրից ոչ ուշ։

Յօդ. 17. Կոմիտէի բոլոր ծախքերը նախահաշիւի սահմաններում հոգացւում են պետական գանձարանից։

Յօդ. 18. Սոյն օրէնքն իր ոյժի մէջ է մտնում հրատարակման օրից։

Ծանօթ. Պարլամենտի նախագահութեան յանձնարարւում է սոյն օրէնքը հրատարակել հաստատելուց անմիջապէս յետոյ։

Յօդ. 19. Բնակարանների բռնագրաւման 1919 թ. յուլիսի 3-ի օրէնքի այն յօդուածները, որոնք վերաբերւում են Երևան քաղաքին և այն բոլոր մարմինները, որոնք վարում են Երևան քաղաքում բնակարանների գրաւման գործը, սոյն օրէնքի հրատարակումով վերացւում են։

Փոխ-նախագահ Պարլամենտի՝ Ս. Տիգրանեան
Աւագ քարտուղար՝ Յ. Տէր Յակոբեան

1919 թ. 7 Հոկտեմբերի
Երևան։

ՕՐԷՆՔ

26. Բնակարանների գրաւման 1919 թ. Հոկտեմբերի 3-ի օրէնքի փոփոխման և լրացման մասին.

Հաստատուած է 1919 թ. Հոկտեմբերի 28-ին.

Ի փոփոխումն և ի լրացումն «Երևան քաղաքում բնակարանների գրաւման մասին» 1919 թ. Հոկտեմբերի 3-ի օրէնքի՝ հաստատել.

Յիշեալ օրէնքի յօդ. 13-ի ծանօթութիւնը փոխել այսպէս.

Ընտանիքում ապրող բոլոր սպասաւորներին՝ անկախ նրանց թւից՝ համարել նոյն ընտանիքի մի անդամ.

Յօդ. 16-ը փոխել այսպէս.

Կոմիտէի որոշման դէմ բողոքողը կամ նրա հաւատարմատարը բողոքը ներկայացնում են անձամբ Շրջանային դատարանի վարչական բաժնին, ներկայացնելով բոլոր ապացոյցները բողոքի հետ միասին, կամ ոչ ուշ քան դատարանի առաջին նիստը։

Բողոքը ներկայացւում է կոմիտէի որոշումը յայտարարելուց յետոյ 24 ժամւայ ընթացքում։

Դատարանի նիստի օրւայ մասին յայտնւում է բողոքողին կամ նրա հաւատարմատարին բողոքագիրը ներկայացնելու ժամանակ։

Վկաներին դատարան բերում է ինքը բողոքողը։

Շրջանային դատարանը իր որոշումը տալիս է երկու օրւայ

ընթացքում. այդ որոշումը վերջնական է և նրա դէմ չի կարելի բողոքել վճռաբեկ ատեանին։

Հոկտեմբերի 3-ի օրէնքին աւելացնել.

Յօդ. 20.

Կոմիտէի անդամների բացակայութեան դէպքում նախագահի որոշումները համարւում են օրինական այն հարցերի նկատմամբ, որոնք մտած են անդամներին գրաւոր կերպով ծանուցւած օրակարգի մէջ։

Փոխ նախագահ Պարլամենտի՝ Ս. Տիգրանեան
Աւագ քարտուղար՝ Յ. Տէր Յակոբեան

1919 թ. Հոկտեմբերի 28
Երևան։

ՕՐԷՆՔ

27. Ներքին գործերի Նախարարին Երևանում բնակարաններ գրաւող կոմիտէի համար 35.000 ր. վարկ բանալու մասին.

Հաստատուած է 1919 թ. Հոկտեմբերի 3-ին.

Բանալ ներքին գործերի Նախարարին երեսուն և հինգ հազար ռուբլու վարկ՝ Երևանում բնակարաններ գրաւող կոմիտէի գործերը հոգալու համար մինչև 31-ն Դեկտեմբերի 1919 թ. համաձայն սոյն Նախահաշիւի՝—

Ծախքեր	Քանի հոգի	Ամսական հիմնական ռոճիկը	Ամսական յաւելումը	Ընդամենը 3 ամս.
Կոմիտէի նախագահ	1	2.000	2.000	12.000
Գործավարներ	2	1.500	1.500	18.000
Դիւանական և գրաւման	—	—	—	5.000
			Ընդամենը	35.000 ռուբլի

Փոխ նախագահ Պարլամենտի՝ Ս. Տիգրանեան
Աւագ քարտուղար՝ Յ. Տէր Յակոբեան

1919 թ. Հոկտեմբերի 3
Երևան։

ՕՐԷՆՔ

28. Յուլիսի 29-ի զինաժողովի օրէնքի գործադրութեան ժամանակամիջոցը մի ամսով երկարացնելու մասին.

Հաստատուած է 1919 թ. Հոկտեմբերի 3-ին.

Երկարացնել յուլիսի 29-ի զինաժողովի օրէնքի գործադրութեան և կոմիսարի լիազօրութիւնների ժամանակամիջոցը սեպտեմբերի 1-ից մինչև 30-ը։

Փոխ-Նախագահ Պարլամենտի՝ Ս. Տիգրանեան
Աւագ քարտուղար՝ Յ. Տ. Յակովբեան

1919 թ. Հոկտեմբերի 4-ին։
Երևան.

ՕՐԷՆՔ

29. Ալէքսանդրապոլի Առևտրական դպրոցի ծառայողներին նպաստ տալու համար Հանրային կրթութեան և Արուեստի Նախարարին 37.936 ր. 30 կ. վարկ բանալու մասին.

Հաստատուած է 1919 թ. Հոկտեմբերի 7-ին.

Բանալ Հանրային կրթութեան և Արուեստի Նախարարի անունով վարկ Ալէքսանդրապոլի Առևտրական ութ դասարանեայ դպրոցի ծառայողներին Մայիս և Յունիս ամիսների յուելումներն և Ապրիլի կրկնառոճիկը տալու համար երեսուն և եօթ հազար ինն հարիւր երեսուն և վեց բուբլու 30 կոպ.։

Փոխ-Նախագահ Պարլամենտի՝ Ս. Տիգրանեան
Աւագ քարտուղար՝ Յ. Տ. Յակովբեան

1919 թ. Հոկտեմբերի 8։
Երևան.

ՕՐԷՆՔ

30. Ալէքսանդրապոլի Հրանօթային արհեստանոցների

կահաւորման համար 2.172.000 ր. վարկ բանալու մասին.

Հաստատուած է 1919 թ. Հոկտեմբերի 7-ին.

Բանալ Զօրական Նախարարին երկու միլիոն հարիւր եօթանասուն և երկու հազար բուբլու վարկ Ալէքսանդրապոլի Հրանօթային արհեստանոցների կահաւորման ու կազմակերպման համար։

Փոխ-Նախագահ Պարլամենտի՝ Ս. Տիգրանեան
Աւագ քարտուղար՝ Յ. Տ. Յակովբեան

1916 թ. Հոկտեմբերի 8։
Երևան.

ՕՐԷՆՔ

31. Միջնակարգ դպրոցների ազգայնացման պատճառով հեռացուած պաշտօնեաների համար Հանրային Կրթութեան և Արուեստի Նախարարին առհաշիւ 150.000 ր. վարկ բանալու մասին.

Հաստատուած է 1919 թ. Հոկտեմբերի 7-ին.

1. Միջնակարգ դպրոցների ազգայնացման և դասախանական վերակացուների պաշտօնի վերացման հետևանքով այն անձանց, որ անկարող են շարունակել իրենց պաշտօնավարութիւնը նոր պայմաններում, զոհացնել ըստ յունիսի 5-ի «Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիական մասի պետական հիմնարկութիւնների վերացման, փոփոխման կամ ազգայնացման պատճառով մնում են շատից դուրս» օրէնքի տրամադրութեան։

2. Յունիսի 5-ի օրէնքի յ. 4.-ը չտարածել այն այլազգի անձանց վրայ, որ ցանկութիւն են յայտնում թողնել Հայաստանի սահմանները։

3. Լիկվիդացիոն գումարը հաշուել՝ նոր շտատներով պաշտօնեաներին արձակուած համարելով սոյն թուի սեպտեմբերի 1-ից։

4. Հանրային Կրթութեան և Արուեստի Նախարարի անունով բանալ առհաշիւ հարիւր յիսուն հազար բուբլու վարկ լիկվիդացիոն գումարը տալու համար։

Փոխ-Նախագահ Պարլամենտի՝ Ս. Տիգրանեան
Աւագ քարտուղար՝ Յ. Տ. Յակովբեան

1919 թ. Հոկտեմբերի 8
Երևան։

ՕՐԷՆՔ

32. Պարլամենտի գրադարան հիմնելու համար 50.000 ր. վարկ բանալու մասին.

Հաստատուած է 1919 թ. Հոկտեմբերի 16-ին.

Բանալ Պարլամենտի Նախագահութեան՝ անունով յիսուն հազար ռուբլու վարկ Պարլամենտի գրադարան հիմնելու համար։

Փոխ Նախագահ Պարլամենտի՝ Ս Տիգրանեան

Աւագ քարտուղար՝ Յ. Տէր Յակոբեան

1919 թ. Հոկտեմբերի 17։

Երեւան.

ՕՐԷՆՔ

33. Պարլամենտի Նախագահութեանը Պարլամենտի անակնկալ ծախքերի համար 20.000 ռուբլի միանուագ վարկ բանալու մասին.

Հաստատուած է 1919 թ. Հոկտեմբերի 17-ին.

Բանալ միանուագ վարկ Պարլամենտի Նախագահութեանը՝ Պարլամենտի Նախահաշւում չընախատեսնուած անակնկալ ծախքերի համար քսան հազար ռուբլի։

Փոխ Նախագահ Պարլամենտի՝ Ս. Տիգրանեան

Աւագ քարտուղար՝ Յ. Տէր Յակոբեան

1919 թ. Հոկտեմբերի 18։

Երեւան։

ՕՐԷՆՔ

34. Հայաստանի Կօօպերատիւների միութեանը 5.000.000 ռուբլի պարտք տալու մասին։

Հաստատուած է 1919 թ. Հոկտեմբերի 17-ին.

Բանալ Ֆինանսների Նախարարի անունով հինգ միլիօն ռուբլու վարկ պարտք տալու Հայաստանի Կօօպերատիւների Միութեանը մի տարի ժամանակով և վեց տոկոսով։

Փոխ-Նախագահ Պարլամենտի՝ Ս. Տիգրանեան

Աւագ քարտուղար՝ Յ. Տէր Յակոբեան

1919 թ. Հոկտեմբերի 18։

Երեւան։

Ելեկտրաշարժ տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի.

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL014713